**Նոտարական ակտի կոդ:** 587-20180126-37-2162447
**Նոտարական ակտի գաղտնագիր:** AJXL4F

# ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գավառ
երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսուն 30/01/2018

Քաղաքացի **ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ**, ծնված՝ 22/03/1976թ-ին, ՀԾՀ՝ 3203760312, նույնականացման քարտ՝ 002846392, տրված՝ 040-ի կողմից, 29/01/2014թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ., 3 Տ, այսուհետ՝ «Վարձատու», մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ի դեմս աշխատակազմի ղեկավար **ՄԻՆԱՍ ՄԿՐՏՉԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ**, ծնված՝ 19/07/1971թ-ին, ՀԾՀ՝ 2907710265, անձնագիր՝ AK0514465, տրված՝ 005-ի կողմից, 31/05/2010թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ Փ., 44/4 Շ, 38ԲՆ, որը գործում է համաձայն ,,Պետական կառավարչական հիմնարկների,, մասին ՀՀ օրենքի և կանոնադրության, որի անունից համաձայն 24/01/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանչորսին/ տրված ՀռՄ/1301-18 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **ՎԱՐԴԱՆ ՎԱՍԱԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԸ**, ծնված՝ 20/06/1981թ-ին, ՀԾՀ՝ 3014810029, անձնագիր՝ AN0320769, տրված՝ 040-ի կողմից, 14/01/2013թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՍԱՐՈՒԽԱՆ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 66 Տ, այսուհետ՝ «Վարձակալ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ ք. Զորավար Անդրանիկի փողոց 14 /տասնչորս/ հասցեում գտնվող շենքի առաջին հարկից 239.65քմ /երկու հարյուր երեսունինը ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական/ ընդհանուր մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի, որը կցվում է սույն պայմանագրին և համարվում պայմանագրի անբաժանելի մասը, Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար, այսուհետ «Օբյեկտ»:
1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) թիվ 2731350 վկայական տրված՝ 11/07/2011թ. /երկու հազար տասնմեկ թվականի հուլիսի տասնմեկին/ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գավառ տարածքային ստորաբաժանման կողմից:
1.3. Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գեղարքունիք մարզային ստորաբաժանման կողմից 25/01/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանհինգին/ տրված անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ թիվ 0178 միասնական տեղեկանքով:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:
2.2. Կողմերն սահմանում են, որ իրենց կնքած պայմանագիրը գործում է 30/01/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունից/ մինչև 25/12/2018թ. /երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի քսանհինգը/:

## 3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ եկամտային հարկը:
3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարները՝ առանց եկամտային հարկի, Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-ը (քսանը), իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը (քսանհինգը):
Վարձակալը վարձավճարից հաշվարկվող եկամտային հարկը, որպես հարկային գործակալ, պահում և բյուջե է փոխանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:
3.3. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
3.4. Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:
3.5. Եթե պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վարձատուն պարտավոր է՝
4.1.1. Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,
4.1.2. Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.
4.1.3. Վարձակալած տարածքում ապահովել էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:
4.1.4. Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին.
4.2. Վարձատուն իրավունք ունի՝
4.2.1. Պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.
4.2.2. Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,
4.2.3. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:
4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3. Վարձակալը պարտավոր է՝
4.3.1. Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար վարձավճարը,ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձերը մատակարար կազմակերպություններին:
4.3.2. Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար,
4.3.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.
4.3.4. Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:
4.4. Վարձակալը իրավունք ունի՝
4.4.1. Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,
4.4.2. Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության

դեպքում.
4.4.3. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:
4.4.4. Վարձկալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1. կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
5.2. Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
5.3. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:
5.4. Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
5.7. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
5.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

## 6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի, Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
8.2. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն աշխատանքային օրյա ժամկետում պետական գրանցման:
8.3. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են կողմերի կողմից, վավերացված են նոտարական կարգով և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
8.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար:
8.5. Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
8.6. Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:
8.7. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը՝ բացառությամբ 04/05/2017թ. /երկու հազար տասնյոթ թվականի մայիսի չորսի/ N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 1-ին; 2-րդ; 3-րդ; 13-րդ; 14-րդ; 19-րդ և 21-րդ կետերով նախատեսված գնումների:
8.8. Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին, որը համարվում է պայմանագրի բնօրինակը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

**ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ**, ծնված՝ 22/03/1976թ-ին, ՀԾՀ՝ 3203760312, նույնականացման քարտ՝ 002846392, տրված՝ 040-ի կողմից, 29/01/2014թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ., 3 Տ

Վարձակալ

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որի անունից համաձայն 24/01/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանչորսին/ տրված ՀռՄ/1301-18 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **ՎԱՐԴԱՆ ՎԱՍԱԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԸ**, ծնված՝ 20/06/1981թ-ին, ՀԾՀ՝ 3014810029, անձնագիր՝ AN0320769, տրված՝ 040-ի կողմից, 14/01/2013թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՍԱՐՈՒԽԱՆ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 66 Տ, Հ/Հ 900011556355, ՀՎՀՀ 02505511

Հայաստանի Հանրապետության անունից
երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսուն
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Գավառ նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև (իրավաբանական անձի) իրավունակությունը նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ **ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ** իրավունքները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համապատասխան,սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում 139

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Տարոն Վրեժի Գրիգորյան

Հավելված 3
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ
գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի
2011թ. հոկտեմբերի 20-ի N 284 Ն հրամանի

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Գարիկ Փայլակի Մինասյան
/Անուն հայրանուն ազգանուն/

ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց N 14
/Հասցեն ,ծածկագիրը/

Մասշտաբ 1:200




1-ին հարկ
H= 3.30
h= 3.0
D= 0.45
d= 0.10-0.45

Կատարող ______________ (ստորագրություն) Թաթուլ Ջանոյան (Անուն, ազգանուն) " 11 " 12. 2017 թ.

Որակավորման վկայականի համարը 0310 տրման ամիս, ամսաթիվը 05.12 .2013 թ.

Իրավաբանական անձի 2511001137 <ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԴԱՎՈՅԱՆՆԵՐ> ՍՊԸ

| ՀՀ | Նախագծային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերեսները /քմ/ | | Բարձրությունը /Մ/ | Ծավալը /խմ/ | կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութերի տեսակները | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումը ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | Թիթեղ | Շիֆեր | Կղմինդր | այլ նյութեր | Անավարտ | Մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | Փայտ | Երկաթբետոն | Սրբատաշ | Երեսապատված | Սվաղած | Սալիկապատ | Դեկորատիվ ծեփածո |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | hu | դպրոց | 1 | 2 | 239.65 | | 3,00 | 718,95 | 1982 | | | | | | | | v | տուֆ | | v | | | | | |

| Շինությունների ընդհանուր մակերեսը /քմ/ | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական կառուցված /քմ/ | Ինքնակամ կառուցված /քմ/ |
| 27 | 28 | 29 |
| 239,65 | 239,65 | 0,00 |

Կատարող ____________ /ստորագրություն/ — Թաթուլ Ջանոյան /անուն ազգանուն/

Որակավորման վկայականի 0310 /համարը/ — «05» «դեկտեմբեր» 2013,թ /տրման ամիս, ամսաթիվ/ — « 11 » 12. 2017թ /կատարման ամսաթիվ/

Իրավաբանական անձի 25.11.001187 /պետական գրանցման համարը/ — «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԴԱՎՈՅԱՆՆԵՐ» ՍՊԸ /անվանումը/ — /ստորագրություն/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**ԳԱՎԱՌԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ**

---

« 01 » 02 2018 թ. N 012/23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՀՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ.ՄԻՆԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մինասյան

Ի լրումն մեր 31.01.2018թ թիվ 012/28 Գրության, ներկայացվում է նաև վարձատու Գարիկ Փայլակի Մինասյանի «Անելիք բանկ» ՓԲԸ- ում բացված հաշվեհամարը. **11806376561404**

:

Բաժնի Պետի Վ.Բաղալյան

**ք. Գավառ 1201, Զորավար Անդրանիկի 14, հեռ.՝ (374 60) 65 40 99 / 611**
info@sif.am , www.ssss.am

**Նոտարական ակտի կոդ:** 587-20181108-88-3202365
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 9F9DSO

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գավառ
երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի ութ 08/11/2018

**ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ**, ծնված` 22/03/1976թ-ին, ՀԾՀ` 3203760312, անձնագիր` 002846392, տրված` 040-ի կողմից, 29/01/2014թ-ին, բնակության հասցե` ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ., 3 Տ, այսուհետ`«ՎԱՐՁԱՏՈՒ» մի կողմից, և Հայաստանի Հանրապետությունը ի դեմս «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, հասցե` ք. Երևան, Նալբանդյան փ., 13, ՀՎՀՀ` 02505511, ի դեմս գլխավոր քարտուղար **ՎԱՆԻԿ ՄԱՔՍԻՄԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**, ծնված` 01/01/1972թ-ին, ՀԾՀ` 1101720018, անձնագիր` AM0474640, տրված` 019-ի կողմից, 18/10/2011թ-ին, բնակության հասցե` ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, 2 ՄԿՐՇ., 8 Շ, 99ԲՆ, որը գործում է համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի և «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության» կանոնադրության, որի անունից համաձայն 02/10/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի երկուսին/ տրված թիվ ՎԲ/ՀռԱ/2398-18 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գավառի տարածքային բաժնի պետ **ՎԱՐԴԱՆ ՎԱՍԱԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԸ**, ծնված` 20/06/1981թ-ին, ՀԾՀ` 3014810029, անձնագիր` AS0208512, տրված` 040-ի կողմից, 31/05/2018թ-ին, բնակության հասցե` ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՍԱՐՈՒԽԱՆ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 66 Տ, այսուհետ`«ՎԱՐՁԱԿԱԼ» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունին կնքված ոչ բնակելի տարծքի վարձակալության պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունին կնքված, և ՀՀ Գավառ նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանի կողմից վավերացված Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14 /տասնչորս/ հասցեում գտնվող ոչ բնակելի տարծքի վարձակալության գրանցում թիվ 139 պայմանագիրը, որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.
1.1.1. Պայմանագրի 2.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
Կողմերը սահմանում են, որ իրենց միջև կնքված պայմանագիրը գործում է 30/01/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունից/ մինչև 25/12/2019թ. /երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանհինգը/:
1.1.2. Պայմանագրի նախկին 2.2 կետը համարել ուժը կորցրած:
2. Պայմանագրի մնացած կետերը թողնել անփոփոխ:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:
2.2. Կողմերի միջև ձեռք բերված` սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից:
2.3. Սույն համաձայնագրի և պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությամբ՝ գրավոր մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է նոտարական վավերացման:
3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:
3.3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3.4. Սույն համաձայնագրի վավերացման հետ կապված ծախսերը կողմերի համաձայնությամբ կատարվում են վարձակալի կողմից:
3.5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրից մեկ օրինակը պահվում է ՀՀ «Գեղարքունիքի մարզ» նոտարական տարածքի նոտարի գործերում, մնացած օրինակները տրվում են կողմերին: Համաձայնագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին, որը համարվում է համաձայնագրի բնօրինակը:

Մենք՝ «Կողմերս» լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող համաձայնագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առնչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ծեռնտու են: Համաձայնագրի բոլոր դրույթները բխում են մեր՝ կողմերիս իրավական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտությամբ:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐՁԱՏՈՒ

**ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ**, ծնված՝ 22/03/1976թ-ին, ՀԾՀ՝ 3203760312, անձնագիր՝ 002846392, տրված՝ 040-ի կողմից, 29/01/2014թ-ին, բնակության հասցե՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ., 3 Տ

ՎԱՐՁԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետությունը ի դեմս «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փ., 13, ՀՎՀՀ՝ 02505511, ի դեմս գլխավոր քարտուղար **ՎԱՆԻԿ ՄԱՔՍԻՄԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**, ծնված՝ 01/01/1972թ-ին, ՀԾՀ՝ 1101720018, անձնագիր՝ AM0474640, տրված՝ 019-ի կողմից, 18/10/2011թ-ին, բնակության հասցե՝ ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, 2 ՄԿՐՇ., 8 Շ, 99ԲՆ, որը գործում է համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի և «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության» կանոնադրության, որի անունից համաձայն 02/10/2018թ. /երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի երկուսին/ տրված թիվ ՎԲ/ՀռՍ/2398-18 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գավառի տարածքային բաժնի պետ **ՎԱՐԴԱՆ ՎԱՍԱԿԻ ԲԱՂԱԼՅԱՆԸ**, ծնված՝ 20/06/1981թ-ին, ՀԾՀ՝ 3014810029, անձնագիր՝ AS0208512, տրված՝ 040-ի կողմից, 31/05/2018թ-ին, բնակության հասցե՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՍԱՐՈՒԽԱՆ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 66 Տ,

Հայաստանի Հանրապետության անունից
երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի ութ
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «Գեղարքունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Տարոն Վրեժի Գրիգորյանիս կողմից։ Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ։ Կողմերի ինքնությունը, գործունակությունը ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում 2169

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Տարոն Վրեժի Գրիգորյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «23» Նոյեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ ք. Զ. Անդրանիկի փողոց 14

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր 30.01.2018թ. ս/մ 139, Համաձայնագիր պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.11.2018թ. գ/մ 2169

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ESTATE CADASTRE

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | 05-001-0354-0022-001 | Դպրոց | 239.65 ք.մ. | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Վարձակալության իրավունքի ժամկետը սահմանված է 30.01.2018թ.-ից մինչև 25.12.2019թ.-ը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արա Ավետիքյան

զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

Կ.Տ.

**Նոտարական ակտի կոդ:** 588-20191224-117-4386109
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 79AAC5

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
## ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գավառ
Երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանչորսին 24.12.2019թ.

ՀՀ քաղաքացի **ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ, ծնված՝ 22/03/1976թ-ին, ՀԾՀ՝ 3203760312, նույնականացման քարտ՝ 002846392, տրված՝ 040-ի կողմից, 29/01/2014թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ., 3 Տ** , այսուհետ՝Կողմ -1 / մի կողմից և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ի դեմս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> պետական մարմինը, հասցե՝ ք. Երևան,Նալբանդյան փողոց 13/ տասներեք/,
ՀՎՀՀ՝02505511, ի դեմս գլխավոր քարտուղար **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ծնված՝ 13/08/1983թ-ին, ՀԾՀ՝ 2308830506, անձնագիր՝ AM0406525, տրված՝ 012-ի կողմից, 04/08/2011թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ., 14/2 Շ, 2ԲՆ** , ով գործում է <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> ՀՀ օրենքի և <<Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության>> կանոնադրության համաձայն,ում անունից համաձայն 24.12.2019 թվականի / երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանչորսին / տրված թիվ Ժ/12-1/034058-2019 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գավառի տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար **ՌՈՒԲԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՅԱԶԵՐՅԱՆԸ**, ծնված՝ 26/12/1960թ-ին, ՀԾՀ՝ 3612600036, նույնականացման քարտ՝ 008252041, տրված՝ 040-ի կողմից, 19/09/2017թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ԱՐԾՎԱՔԱՐԻ 1 /մեկ/Փ. 4 /չորս/ՓԿՂ., 3 /երեք/Տ /այսուհետ՝ Կողմ -2/, միասին այսուհետ՝,, ԿՈՂՄԵՐ,,, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունին Կողմերի միջև կնքված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466,467, 468 և 469 հոդվածներով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ , հիմք ընդունելով 30.01.2018թվականին ՀՀ Գավառ նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանի կողմից գրանցամատյան թիվ 139-ով վավերացված ՀՀ, Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14/ տասնչորս/ հասցեում գտնվող ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.որոշեցին պայմանագրի 2-րդ գլխի 2.2 կետում կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

,, Կողմերը սահմանում են , որ իրենց միջև կնքված պայմանագիրը գործում է 30/01/2018թ./ երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունից/ մինչև 25/12/2020 թվականը/երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսանհինգը/,,:

1.1. Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի նախկին 2.2 կետը:

1.1.1. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112018-05-0048 վկայականի, տրված 23.11.2018 թվականին անշարժ գույքի կադաստրի Երևան տարածքային ստորաբաժանման կողմից ՀՀ, Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14/ տասնչորս/ հասցեում գտնվող անշարժ գույքը՝239.65քմ/ երկու հարյուր երեսունինն ամբողջ վաթսունհինգ/ ընդհանուր մակերեսով վարձակալության իրավունքով պատկանում է <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>>ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ:

1.2. Համաձայն թիվ US-20122019-05-0466 Միասնական տեղեկանքի տրված 20.12.2019թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից , ՀՀ Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14 հասցեում գտնվող գույքը ծանրաբեռնված է ԱՄԵՐԻԱԲԱՆԿ փակ բաժնետիրական ընկերության գրավի իրավունքով ՝ գրավի պայմանագիր2018-11-15 N2022192,առկա է Բանկի

համաձայնությունը որպեսզի Բանկում գրավադրված Գարիկ Փայլակի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14 հասցեում գտնվող անշարժ գույքը տրվի վարձակալության <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊՄ /գրանցման համար 286.184.1024769,գրանցման ամսաթիվ 2018-06-27,ՀՎՀՀ՝02505511/ պայմանով, որ կնքվելիք վարձակալության պայմանագրում պարտադիր ամրագրվեն հետևյալ երկու կետերը և պահպանվեն ներքոնշյալ բոլոր պայմանները. .

1.2.2. ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ կատարել լրացում, ավելացնել 2.3 կետը շարադրելով .

,, Վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է ,,Ամերիաբանկ,,ՓԲԸ գրավի իրավունքով և վերջինս,հանդիսանալով վարձակալվող գույքի նկատմամբ գույքային իրվունքի տիրապետող, իրավունք ունի որպես շահագրգիռ անձ ցանկացած ժամանակ կողմերից պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը:Բանկի այս պահանջը պարտադիր է Կողմերի համր պահանջը ստանալուց 3/ երեք/ օրվա ընթացքում ՝ կատարելով այդ լուծման նոտարական վավերացում և դրանից բխող վարձակալի իրավունքների դադարեցման գրանցում ՀՀ կադաստրի կոմիտեում :Հակառակ դեպքում բանկի պահանջը հիմք է հանդիսանում Վարձակալության իրավունքը գրանցած ՀՀ իրավասու պետական մարմնի համար՝Վարձակալության պայմանագիրը լուծված համարելու և Վարձակալի՝ վարձակալած գույքի նկատմամբ ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար:Վարձակալը Բանկի պահանջը ստանալուց հետո 3/երեք/ օրվա ընթացքում պարտավոր է ազատել Վարձակալած գույքը,,:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՑ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում 30/երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում և ուժի մեջ է իրավունքների պետական գրանցման պահից:

2.2 ԿՈՂՄԵՐԻ միջև ձեռք բերված՝ սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ՝ ուժի մեջ մտնելու պահից:

2.3.. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ և ՊԱՅՄԱՆԱԳՐԻ դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կարող է փոփոխվել կամ լրացվել ԿՈՂՄԵՐԻ համաձայնությամբ՝գրավոր մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով , որը ենթակա է նոտարական վավերացման:

3.2.. ԿՈՂՄԵՐԻ պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՆ ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ անբաժանելի մասը:

3.4.. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ վավերացման հետ կապված ծախսերը ԿՈՂՄԵՐԻ համաձայնությամբ կատարվում են ԿՈՂՄ-2-ի կողմից:

3.5.. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ մեկ օրինակը պահվում է ՀՀ <<Գեղարքունիքի մարզ >> Նոտարական տարածքի Նոտարի գործերումքաղաք Գավառ, Զ. Անդրանիկի 45 հասցեում, մնացած օրինակները տրվում են ԿՈՂՄԵՐԻՆ:ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է Նոտարի մոտ պահվող օրինակին, որը համարվում է ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ բնօրինակը:

3.6. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ Նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց ԿՈՂՄԵՐԻՆ, Համաձայնագրի բովանդակությունը, առարկան, իրավական հետևանքները ԿՈՂՄԵՐԻ համար պարզ է, հասկանալի, համապատասխանում է նրանց ցանկությանն ու իրական մտադրություններին:

Կողմ -1

**ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ**

Մինասյան Գարիկ Փայլակի

Կողմ - 2
ՀՀ, <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>>ՊՄ
հասցե՝ ք. Երևան,Նալբանդյան փողոց 13/ տասներեք/
լիազորված անձ **ՌՈՒԲԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՑԱԶԵՐՅԱՆ**

Ռուբիկ Գուրգենի Ցազերյան

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գավառ
երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանչորսին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<Գեղարքունիքի մարզ >> նոտարական տարածքի նոտար՝ Լալա Վոլոդյայի Մելիքյանիս կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը ,ինչպես նաև իրավաբանական անձի , նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:
Գրանցված է գրանցամատյանում թիվ՝ 3925 ով:
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Լալա Վոլոդյայի Մելիքյան


17491422



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 24 հունվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ ք. Զ. Անդրանիկի փողոց 14

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր 30.01.2018թ. ս/մ 139, Համաձայնագիր պայմանագրում փոփոխությունններ և լրացումներ կատարելու մասին 08.11.2018թ. գ/մ 2169, Համաձայնագիր վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին՝ 24.12.2019թ. գ/մ 3925

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

**ՎԿԱՅԱԿԱՆ N 24012020-05-0051, գաղտնաբառ՝ 7YSRR5N4TXGZ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 05-001-0354-0022-001 | Դպրոց | 239.65 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 25.12.2020թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարինե Հովհաննիսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 24012020-05-0051, գաղտնաբառ՝ 7YSRR5N4TXGZ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

N 175204 24/12/2019 թ.

ԴԻՄՈՒՄ- ՀԱՅՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Հաճախորդ Գարիկ Փայլակի Մինասյան ին**

**(համատեղ հաշվետերերից բոլորի անունը ևս նշվում է )**

**Հարգելի հաճախորդ սույնով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԳԱՎԱՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ծանուցում է Ձեզ, որ Ձեր Դիմում-Հայտի համաձայն՝**

| | | |
|---|---|---|
| 1. | **☐ Բացվել է հաշիվ.** | |
| | Հաշվի համար | |
| | Հաշվի անվանում | |
| | Հաշվի արժույթ | |
| | Հաշվի բացման ամսաթիվ | |
| | Հաճախորդի ներքին կոդ | |
| | Այլ նշումներ | |
| 2. | **☑ Թողարկվել է վճարային քարտ.** | |
| | Քարտային հաշվի համար | 163006935874 |
| | Քարտի համար | 9051210201769647 |
| | Քարտի արժույթ | AMD |
| | Քարտապանի ԱԱՀ | Մինասյան Գարիկ Փայլակի |
| | Լրացուցիչ քարտի հաշվեհամար | |
| | Լրացուցիչ քարտի համար | |
| | Կից քարտի հաշվեհամար | |
| | Կից քարտի համար | |
| | Կից քարտապանի ԱԱՀ | |
| | Քարտի թողարկման ամսաթիվ | 24/12/2019 |
| | Այլ նշումներ | |

*Ծանոթություն*; լրացվում է տողը, չլրացված տողերում Z, սույն ծանուցումը հաճախորդին առձեռն հանձնելու դեպքում բանկում պահվում է ծանուցման պատճենը, որի օրինակի վրա Հաճախորդը ստորագրում է հաստատելով առձեռն ստացումը:

Գաբրիելյան Սաքենիկ

..........................................................

Հանձնող աշխատակցի անուն, ազգանուն, ստորագրություն

24/12/2019 16:15:37 թ

Մինասյան Գարիկ Փայլակի ..............

ստորագրություն

**Նոտարական ակտի կոդ:** 588-20201224-117-4861190
**Նոտարական ակտի գաղտնագիր:** PZJ9MM

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գավառ
Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսանչորսին 24.12.2020թ.

ՀՀ քաղաքացի **ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ, ծնված՝ 22/03/1976թ-ին, ՀԾՀ՝ 3203760312, նույնականացման քարտ՝ 002846392, տրված՝ 040-ի կողմից, 29/01/2014թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ., 3 Տ ,** այսուհետ՝Կողմ -1 / մի կողմից և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ի դեմս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> պետական մարմինը, հասցե՝ ք. Երևան,Նալբանդյան փողոց 13/ տասներեք/,ՀՎՀՀ՝02505511, ի դեմս գլխավոր քարտուղար **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ծնված՝ 13/08/1983թ-ին, ՀԾՀ՝ 2308830506, անձնագիր՝ AM0406525, տրված՝ 012-ի կողմից, 04/08/2011թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ., 14/2 Շ, 2ԲՆ** , ով գործում է <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> ՀՀ օրենքի և <<Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության>> կանոնադրության համաձայն,ում անունից համաձայն 23.11.2020թվականի / երկու հազար քսան թվականի նոյեմբերի քսաներեքին/ տրված թիվ 02/12-1/26912-20 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գավառի տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար **ՌՈՒԲԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՅԱԶԵՐՅԱՆԸ**, ծնված՝ 26/12/1960թ-ին, ՀԾՀ՝ 3612600036, նույնականացման քարտ՝ 008252041, տրված՝ 040-ի կողմից, 19/09/2017թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԳԱՎԱՌ, ԱՐԾՎԱՔԱՐԻ 1 /մեկ/Փ. 4 /չորս/ՓԿՂ., 3 /երեք/Տ /այսուհետ՝ Կողմ -2/, միասին այսուհետ՝,, ԿՈՂՄԵՐ,,, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունին Կողմերի միջև կնքված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466,467, 468 և 469 հոդվածներով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ , հիմք ընդունելով 30.01.2018թվականին ՀՀ Գավառ նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանի կողմից գրանցամատյան թիվ 139-ով վավերացված ՀՀ, Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14/ տասնչորս/ հասցեում գտնվող ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.որոշեցին պայմանագրի 2-րդ գլխի 2.2 կետում կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

,, Կողմերը սահմանում են , որ իրենց միջև կնքված պայմանագիրը գործում է 30/01/2018թ./ երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունից/ մինչև 30/07/2021թվականը/երկու հազար քսանմեկ թվականի հուլիսի երեսունը/,,:

1.1. Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի նախկին 2.2 կետը:

1.1.1. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112018-05-0048 վկայականի, տրված 23.11.2018 թվականին անշարժ գույքի կադաստրի Երևան տարածքային ստորաբաժանման կողմից ՀՀ, Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14/ տասնչորս/ հասցեում գտնվող անշարժ գույքը՝239.65քմ/ երկու հարյուր երեսունինն ամբողջ վաթսունհինգ/ ընդհանուր մակերեսով վարձակալության իրավունքով պատկանում է <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>>ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ:

1.2. Համաձայն թիվ US-24122020-05-0178 Միասնական տեղեկանքի տրված 24/12/2020թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից , ՀՀ Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14 հասցեում գտնվող գույքը ծանրաբեռնված է ԱՄԵՐԻԱԲԱՆԿ փակ բաժնետիրական ընկերության գրավի իրավունքով ՝ գրավի պայմանագիր 2018-11-15 N2022192,առկա է Բանկի O.AB.704.11RBD.CSD.0.10.20 համաձայնությունը տրված 21/12/2020թվականին որպեսզի

Բանկում գրավադրված Գարիկ Փայլակի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզ ,ք. Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց 14 հասցեում գտնվող անշարժ գույքը տրվի վարձակալության <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊՄ /գրանցման համար 286.184.1024769,գրանցման ամսաթիվ 2018-06-27,ՀՎՀՀ՝02505511/ պայմանով,
որ կնքվելիք վարձակալության պայմանագրում պարտադիր ամրագրվեն հետևյալ երկու կետերը և պահպանվեն ներքոնշյալ բոլոր պայմանները. .
1.2.2. ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ կատարել լրացում, ավելացնել 2.3 կետը շարադրելով .
,, Վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է ,,Ամերիաբանկ,,ՓԲԸ գրավի իրավունքով և վերջինս,հանդիսանալով վարձակալվող գույքի նկատմամբ գույքյին իրվունքի տիրապետող, իրավունք ունի որպես շահագրգիռ անձ ցանկացած ժամանակ կողմերից պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը:Բանկի այտ պահանջը պարտադիր է Կողմերի համր պահանջը ստանալուց 3/ երեք/ օրվա ընթացքում ՝ կատարելով այդ լուծման նոտարական վավերացում և դրանից բխող վարձակալի իրավունքների դադարեցման գրանցում ՀՀ կադաստրի կոմիտեում :Հակառակ դեպքում բանկի պահանջը հիմք է հանդիսանում Վարձակալության իրավունքը գրանցած ՀՀ իրավասու պետական մարմնի համար՝Վարձակալության պայմանագիրը լուծված համարելու և Վարձակալի՝ վարձակալած գույքի նկատմամբ ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար:Վարձակալը Բանկի պահանջը ստանալուց հետո 3/երեք/ օրվա ընթացքում պարտավոր է ազատել Վարձակալած գույքը,,:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՑ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում 30/երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում և ուժի մեջ է իրավունքների պետական գրանցման պահից:
2.2 ԿՈՂՄԵՐԻ միջև ձեռք բերված՝ սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ՝ ուժի մեջ մտնելու պահից: '
2.3.. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ և ՊԱՅՄԱՆԱԳՐԻ դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կարող է փոփոխվել կամ լրացվել ԿՈՂՄԵՐԻ համաձայնությամբ՝գրավոր մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով , որը ենթակա է նոտարական վավերացման:
3.2.. ԿՈՂՄԵՐԻ պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:
3.3. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՆ ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ անբաժանելի մասը:
3.4.. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ վավերացման հետ կապված ծախսերը ԿՈՂՄԵՐԻ համաձայնությամբ կատարվում են ԿՈՂՄ-2-ի կողմից:
3.5.. Սույն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ մեկ օրինակը պահվում է ՀՀ <<Գեղարքունիքի մարզ >> նոտարական տարածքի նոտարի գործերումքաղաք Գավառ, Զ. Անդրանիկի 45 հասցեում, մնացած օրինակները տրվում են ԿՈՂՄԵՐԻՆ:ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին, որը համրվում է ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ բնօրինակը:
3.6. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց ԿՈՂՄԵՐԻՆ, Համաձայնագրի բովանդակությունը, առարկան, իրավական հետևանքները ԿՈՂՄԵՐԻ համար պարզ է, հասկանալի, համապատասխանում է նրանց ցանկությանն ու իրական մտադրություններին:

Կողմ -1
**ԳԱՐԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ**

Կողմ - 2
ՀՀ, <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>>ՊՄ
հասցե՝ ք. Երևան,Նալբանդյան փողոց 13/ տասներեք/
<<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊՄ
լիազորված անձ **ՌՈՒԲԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՅԱՉԵՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գավառ
Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսանչորսին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<Գեղարքունիքի մարզ >> Նոտարական տարածքի նոտար՝ Լալա Վոլոդյայի Մելիքյանիս կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը ,ինչպես նաև իրավաբանական անձի , նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:
Գրանցված է գրանցամատյանում թիվ՝ 2971 ով:
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Լալա Վոլոդյայի Մելիքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 22 հունվարի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ ք. Զ. Անդրանիկի փողոց 14

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր 30.01.2018թ. ս/մ 139, Համաձայնագիր պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.11.2018թ. գ/մ 2169, Համաձայնագիր վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին՝ 24.12.2019թ. գ/մ 3925, Համաձայնագիր 24/12/2020թ.գ/մ 2971

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

**ՎԿԱՅԱԿԱՆ N 22012021-05-0036, գաղտնաբառ՝ 7YRKZAZ5PWPU**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 05-001-0354-0022-001 | Դպրոց | 239.65 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 30/07/2021թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳԵՂԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 22012021-05-0036, գաղտնաբառ՝ 7YRKZAZ5PWPU**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե